ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի հուլիսի 22-ի թիվ 366-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԿՈՇԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 3-րդ հավելվածի 61-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Կոշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Տոնոյանի 2026 թվականի հուլիսի 21-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Կոշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ռուզաննա Տոնոյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի մասը 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար 20 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 27-ից օգոստոսի 21-ը ներառյալ:

2. Ռուզաննա Տոնոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Կոշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Կոշի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Մարիամ Կնյազյանին:

Ռուզաննա Տոնոյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 24-ից:

Պարտականությունները կատարող՝

Recoverable Signature

Ստորագրող
ՄԻԼԱԴԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6914980608

X

Signed by: HOVHANNISYAN MILADA 6914980608

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի
ք. Աշտարակ